Հ. Պողոս ներկայ նամակաւս նաև կը հաղորդէ Աբրահոր ի Մեթոն՝ Պոլսոյ և գաւառներու մէջ տեղի ունեցած դէպքերն ու անցուդարձը։

... Ուլահ պէկն որ էր ի Կոստանդիոնիպոլիս ի բանտն, յետ բազմաց չարչարանաց, զորս ետուն նմա, որպէս զի զոր ինչ ունիցի առնուցուն ի նմանէ, և յետ առնլոյ զտասն և եօթն հազար քսան դրամս ի յօգոստոսի ամսոյ 17ին սպանին և ընդ նմա հինգ արք ևս, որոց ոմանք լեալք են որդիք իւր. և ոմանք խորհրդականք իւր և զդիս վեցեցունս ևս եդին առաջի դրան թագաւորին։ Տակաւին կին նորա և դստերքն ի ձեռն պօստանճի պաշոյն են. և ոչ յայտնի զինչ արարելոց են և նոցա։... Միանգամ այսպէս լուր ել թէ ի յանատոլի բազում տաճկունք ժողովեցեալք իցեն. և կարդացմամբ զիրաւունս՝ եկեալք ի ստամպօլ զթագաւորն և զայլս ոմանս փոխելոցք իցեն. բայց սուտ էել։ Ի յուլիսի ամսոյն ի Թօխատ կրակ անկեալ է, և այրեալ է զերկոտասան հազար կրպակ, գեօթն բաղանիկ, և զչորս խան։ Երկու անգամ կրակ անկաւ ի ստամպօլ. մինն ի սարայն թագաւորին, նորում այրեցան երկու և երեք հացի բուռք. և միւսն ի սուլթան պայազըն, նորում քսան և երեսուն կր[պ]ակ այրեցան մերձ այնր տեղի, ուր վաճառին հաւք։ Սկսեալ է թագաւորն զչորս և զհինգ մաւունայ չինել տալ. և զայլս բազումս պատրաստութիւնս առնէ օրըստօրէ. բայց առ որ կողմ գնալն ոչ է յայտնի։ Զղալադա սարայն, որ վաղուց հետէ աւերեցեալ էր, այս վէզիրս չինել ետ այնու վախճանաւ, որոյ վախճանի նախապէս չինեցեալ է և յետոյ խանգարեալ է, վախճան՝ որոյ վասն չինեցեալ է, այս լեալ իցէ, զի սահմանեալ ժամանակօք թւով այսքան և այնքան ի յուռումելի զորդիս քրիստոնէից ժողովեալ, բերեալ և դրեալ իցեն հանդերձ տաճկացուցմամբք ի Կալադա սարայն, և անդէն ուսուցեալ և կրթեալ զնոսա ի պաշտօն արքունական կարգեալ իցեն։ Նմանապէս և այժմ առնելոցն են։ Ի ժամանակի թագաւորիս այսորիկ ամենայն էսնաւ ասեն, թէ ոչ գոն առք և տուրք։ Ի յամիս այսորիկ ոչ եղեն մինչև ցայս վայր գրեթէ մահք. այ- սինքն եումուրճախք։

Ի թվին Հայոց ռճկգ [1714] և ի սեպտեմբերի 2
գրեցաւ թուղթս ի Հայր Պողոս ծառայ
կրօնաւոր քահանայէ

Նամակիս ներքև բացի այս թուականէն կը գտնուի քիչ մը հեռուն՝ նաև ուրիշ մը, այսպէս «իսկ վիւսն գրեցաւ ի թվին Հայոց ռճկգ և ի յօգոստոսի 30ին»։ Մենք ուրիշ գիր չտեսանք. թերևս ատիկայ ակնարկութիւն մ'է նոյն նամակին՝ տարբեր անձի ձեռքով գրկած նախընթաց օրինակի մը՝ ինչպէս նոյն ժամանակի սովորութիւն էր, ապահով ըլլալու համար։

Ե.

Այս նամակը ոչ մի նշան չունի թէ ո՞ր քաղաքէն գրկուած է առ Մխիթար։

Առ վերապատուելի Աբբայի տն Մխիթար աստուածաբան վարդապետի

Գիտասցէ տէրութիւնն քո վերոյ գրեցելոյդ իմոյ։ Քանզի բազում ժամանակ է որ վարդապետէն գիր առած չեմ. քանզի գրեր էր ի մատուիդ քաղաքէն, որ է ըսպանեայու, թէ կուզեմ որ յետ դառնամ, զերրէ ըսպանեայու անուն է Մնացեր, խարճէրնեիս չի հաներ, ուր տեղ կերթանք ամենեքեան կուլան, թէ աղքատացանք վասն երկար պատե-